



# Security

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իջևանի Օրհուս կենտրոնի 2014թ. .

Հունվար – Դեկտեմբեր ամիսների

Կատարած աշխատանքների մասին

17.12.2014

2014 թվականին Իջևանի Օրհուս կենտրոնը շարունակել է իր առաքելությունը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավվածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն): Հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ կենտրոնը հարթակ է հանդիսացել քննարկումների քաղաքացիական նախաձեռնությունների, հանդիպումների ու էկոլոգիական մշակույթի ձևավորման համար, կապող կամուրջ՝ հասարակություն-SԻՄ ասպարեզում, հենվելով Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնադրույթների վրա՝ նպաստել շրջակա միջավայրի պահպանությանն ու համայնքների կայուն զարգացմանը:

**Իջևանի Օրհուս կենտրոնի աշխատանքը ընթացել է ըստ համակարգողների հետ կնված պայմանագրի պահանջների, որոնք որոշակի իրավունքների և պարտավորությունների շրջանակներում հնարավորություն են տվել ըստ պատշաճի կազմակերպել և իրականացնել Իջևանի Օրհուս կենտրոնի աշխատանքը: Ըստ պայմանագրային պահանջի կազմվել է նաև աշխատանքների իրականացման ճանապարհային քարտեզ:**

Հաշվետու ժամանակահատվածում Իջևանի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 28 միջոցառում: Այդ թվում՝ տեղեկատվության մատչելիության ուղղությամբ միջոցառում 23, հասարակության մասնակցության ուղղությամբ 1, էկոլոգիային ուղղված միջոցառում 4, նախաձեռնել ենք հասարակական քննարկում 6, մասնացկել հասարակական լսման 2, որոնց մասնակցել է ընդհանուր թվով 385 մարդ, որից 200 տղամարդ և 185 կին, քննարկվող հարցերի կամ նախագծերի մասին տարածել հնարավոր ձեռքբերված տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ տարածք է տրամադրվել տարբեր քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: /Կից ֆայլով կարող եք տեսնել Իջևանի Օրհուս կենտրոնի վիճակագրական հաշվետվությունը/:

- ✓ Իջևանի Օրհուս կենտրոնի համակարգողը փորձագետների և Էկոդաշինքի անդամների հետ համատեղ կազմակերպել և անց է կացրել իրազեկման սեմինար-քննարկում շրջակա միջավայրի խնդիրների և ոլորտին առնչվող կարևոր որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ, մասնավորապես ՓՀԷԿ-երի հետ կապված:



- ✓ ՏԻՄ և մարզային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար՝ Օրհուսի կոնվենցիայով և ազգային օրենսդրությամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ կատարվել են խորհրդակցություններ, բաժանվել են տեղեկատվական թերթիկներ, ինչպես նաև ձեռք է բերվել տարբեր բնապահպանական խնդիրների լուծման շուրջ համագործակցության պայմանավորվածություն:
- ✓ Իջևանի Օրհուս կենտրոնը միաժամանակյա համաձայնեցված աշխատանք է տարել Մևանից հավելյալ ջրբացթողումների մասին օրենսդրական նախաձեռնության շուրջ և տեղում կազմակերպել իրազեկման սեմինար-քննարկում:
- ✓ Իջևանի Օրհուս կենտրոնը բազմանշանակ աշխատանք է տարել մարզում առկա բնապահպանական արդյունավետ կառավարման լավագույն փորձի տարածման, կառավարման մարմինների և հասարակության փոխհամագործակցության լավագույն օրինակների ներկայացման ուղղությամբ, առաջարկել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ՝ ակտիվ համագործակցելով “Էկոլուր” ՀԿ-ի, «Պրոգրես» ՀԿ-ի, «Իջևան-ինֆոտան»,

<<Եվրասիա>> հիմնադրամի, Համահայկական Բնապահպանական ճակատի, և այլ քաղաքացիական նախաձեռնությունների հետ):

- ✓ Իջևանի Օրհուս կենտրոնը նախաձեռնել կամ աջակցել է Էկոկրթական 23 միջոցառման կազմակերպմանը՝ ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, ուսուցիչների ներգրավմամբ, մարզում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես նաև Օրհուսի Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման վերաբերյալ: Հատկապես կարևորում ենք ԵՊՀ ԻՄ-ի հետ համագործակցությունը, որի ուսանողները մշտապես ակտիվ մասնակցություն ունեն կենտրոնի միջոցառումներին:
- ✓ Տեղեկատվական տարբեր միջոցներով և եղանակներով՝ կայք-էջեր, տեղեկագրեր, տեղեկատվական ստենդներ, հոդվածներ և այլն, աջակցել առկա բնապահպանական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանների իրազեկության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով բնապահպանական տեղեկատվության հասանելիությանն ու մատչելիությանը (օգտագործելով [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքի, տեղական էլեկտրոնային ցանցերի և տարբեր ՋԼՄ-ների ընձեռած հնարավորությունները): Հատկապես մեծ ուշադրություն ենք դարձնում ՓՀԷԿ-երի հիմնախնդիրների լուսարանմանը, որպես արդյունք <<Խաչաղբյուր 1>>, <<Խաչաղբյուր 2>>, <<Իջևան 1>> ՓՀԷԿ-երի հիմնախնդիրների լուսարանմանը:
- ✓ Իջևանի Օրհուս կենտրոնում հասարակության մասնակցության խթանման նպատակով նախաձեռնվել է 15 հասարակական քննարկում կամ կենտրոնը հարթակ է ծառայել բնապահպանական թեմաներով խորհրդակցությունների, բանակցությունների և դասընթացների կազմակերպման և անցկացման համար:
- ✓ Իջևանի Օրհուս կենտրոնը խթանել է ազդակիր համայնքների բնակչության մասնակցությունը հանրային լսումներին: Այս ուղղությամբ հատկապես ակտիվ աշխատանք է տարվել <<Իջևան 1>> ՓՀԷԿ-ի հետ կապված, հասարակական լսումների ընթացքն ամբողջությամբ տեսագրվել ու տարածվել է մեր և <<Էկոլուր>> ՀԿ-ի կողմից՝ առավել լայն հանրությանն իրազեկելու նպատակով:
- ✓ Իջևանի Օրհուս կենտրոնը դիմել է բնապահպանական տեղեկատվություն տնօրինող աղբյուրներին և հանրության համար կարևոր բնապահպանական

հարցերի շուրջ ստացած տեղեկատվությունը տարածել այդ տեղեկատվությունն ինչպես կայքի, այնպես էլ էլ. ցանցերի միջոցով. [http://aarhus.am/?page\\_id=132](http://aarhus.am/?page_id=132) :

- ✓ Շրջակա միջաջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով՝ հունվար-դեկտեմբեր ամիսներին Իջևանի Օրհուս կենտրոնի կողմից 7 հարցում է ուղղվել իրավասու մարմիններին, ստացված տեղեկատվությունը տարածվել է, անհրաժեշտության դեպքում առկա տեղեկատվության հիման վրա կազմակերպել հանրային քննարկում:
- ✓ Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ: /կարող եք տեսնել կից ֆայլով, այսինքն այստեղ կցելու եք Ձեր Statistics Excel-ի ֆայլը/

Օրհուս Կենտրոնի համակարգող Դավիթ Ղազարյան

E:mail. david.ghazaryan.83@mail.ru

Հեռ: 077609000

093007010